զաքական ճակատագիրն միացած է եղել Հայաստանի ճակատագրի հետ, իշխանությունն՝ իշխանության հետ, նախարարությունն՝ նախարարության հետ, թագավորությունն՝ թագավորության հետ, փառքն՝ փառաց հետ և անկումն՝ անկման հետ։

«Հայաստանի առաջին լուսավորության հետ Քրիստոնէական լուսավորությունն ողջունում է Աղուանից մայրաքաղաքն Հողայ՝ Եղիշ Առաքելի քարոզությամբ։ Սոյն Առաքեալն քարոզելով հասնում է Աղուանից Ղարալա գաւառն, մտնում և քարոզում Սահառ[1]) քաղաքում։ Յետոյ գնում է Նուխու մօտ եղած Գիս գիւղաւանն, լուսաւորում ժողովուրդը ճշմարիտ Աստուածպաշտության լուսով, կառուցանում առաջին եկեղեցին և մատուցանում պատարագ։ Ապա սերմանելով Աստուծոյ խօսքերը և աշակերտելով շատերը անցնում է Հարգունի դաշտակով և նահատակւում Հոմէնք կոչուած գիւղամոլ զոհարանում (Մով. Կաղ. եր. 8-9)։

Հայաստանի երկրորդ և ընդհանուր լուսաւորության հետ՝ Քրիստոնէական ընդհանուր լուսաւորությունն ծաւալում է և Աղուանից երկրում Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաքելասարաս Հայրապետի ձեռով, որպէս երկնաւոր հրեշտակի ձեռով. ամենուրեք ծաւալում է Քրիստոնէությունն, շինւում են եկեղեցիներ և կարգւում հոգեւոր պաշտօնեաներ։ Կռատուններն կամ բագինները փոխւում են տաճարների, քրմությունն՝ Քահանայության, զոհագործությունն՝ պատարագի և մոգոտիապաշտությունն՝ Աստուածպաշտության։ Վերջապէս Աղուանից երկրի բնիկ (Գարգարացւոց, Գարդմանցւոց, Ծովդէացւոց և Ուտիացւոց) և եկամուտ ազգերն Կասպից, Լփանց, Ճղբաց, Մաղբթաց և եռանկիւնու մէջ բնակող ցեղերն — ձուլւում և միանում են Հայաստանեայց Առաքելական և սուրբ եկեղեցու հետ Քրիստոնէական կրօնով, դաւանութեամբ և եկեղեցով[2])։ Հայաստանի դրականական և մատենագրական լուսաւորության հետ՝ դրակա-

---

[1]) Փարիզում ապուածում՝ Սահառ, իսկ Մոսկուայում ապ. Սահառ։

[2]) Որք էին ամենեքեան հաւատացեալք ի մի Կաթուղիկէ Առաքելական եկեղեցի» (Եղիշ. եր. 15. 32-33, 93 և 246-247)։